

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
գեղարվեստական կրթության ֆակուլտետի
արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության
ամբիոնի մագիստրոս
ՀՏԴ 94 (479.25):008

**ՕՏԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՑԹՈՒՄ.
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

Բանալի բառեր և արտահայտություններ. օտար ազդեցություններ, ազգային ինքնություն, հոգևոր մշակույթ, փոխառություն, ազգայնականություն:

Ключевые слова и выражения: внешние влияния, национальная идентичность, духовная культура, заимствование, национализм.

Key words and expressions: foreign influences, national identity, spiritual culture, borrowing, nationalism.

«Ազգերու փոխադարձ ազդեցութիւնն անուրանալի եւ անհերքելի փաստ է, որովհետեւ անազդեցիկ մնացած ազգ չիկայ. իւրաքանչիւր ազգ, ինչ որ չունի, ունեցողէն, պէտք զգացած ժամանակ, փոխ կ'առնէ եւ կ'ազգայնացնէ»¹:

Հշմարիտ են վարդապետի այս խոսքերը: Մեր իմացական քաղաքակրթությունների տիրույթում անհնար է ցուցանել գեթ մեկ ազգ կամ ժողովուրդ, որ անմասն է մնացել այլազան փոխառումների անխուսափելի գործընթացից: Թեպետ վերջինն այս կամ այն չափով բոլորին է բնորոշ, այդուհանդերձ ազգերի մշակույթներից՝ հայկականն «առանձին տեղ է բռնում այս հարցում»², քանի որ «*ահռեկի նյութեր է ընձեռում սեփական և ուրիշ ազգերի կուլտուրական կապերն ու արմատները մերկացնելու համար*»³:

Յուրաքանչյուր էթնոսի համար, բացի մարդաբանականից, տարբերակիչ հատկանիշերի էանյութ է հանդիսանում հոգևոր մշակույթը: Դրա վրա օտարի մշակութային ներգործությունները, բացի բարերար

¹ Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ եւ յորումներ, գիրք Բ, Եր., «Սարգիս Խաչենց» հրատ., 2007, էջ 26:

² Ն. Մառ, Հայկական մշակույթը. նրա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվագիտության, Եր., «Հայաստան» հրատ., 1989, էջ 16:

³ Նույն տեղում, էջ 41:

ազդեցություններից, ունենում են նաև բացասական, երբեմն ազգայինը դիմագրկող, մինչև անգամ եղծանող հետևանքներ: Իսկ, ահա, օտարներից նյութական ու սոցիալական մշակույթի փոխառումները կարելի է ընդունել ոչ թե որպես սոսկ վերարտադրություն, այլ որպես տեղայնական տարատեսակ նվաճումների համընդհանուր յուրացում: Վերջինը համարելով պատմականորեն անհրաժեշտ և օրինաչափ շրջանցում ենք նյութական և սոցիալական մշակույթում փոխառման դրսևորումների քննությունը:

Ազգերի և ժողովուրդների հոգևոր մշակույթի ծագումնաբանական և զարգացման հարցերը քննելիս՝ գիտական միտքը պարտավոր է կանգ առնել մշակութային փոխազդեցությունների վրա: Միայն այս պարագայում է հնարավոր հանգել անաչառ և համալիր եզրակացությունների: Սակայն այս մեթոդը ոչ միշտ է նպատակային կիրառվել: Հատկապես հայագիտությունը, առերեսվելով դրան, մեծապես տուժել է: Գիտությանը հայտնի են դեպքեր, երբ հայ հոգևոր մշակույթը բացարձակապես առանձին է դիտվել և անջրպետվել օտար անժխտելի ազդեցություններից, ինչը բերել է սխալագրության: Եղել է նաև հակառակը: Անբավարար ծանոթության, հաճախ միտումնավոր կեղծարարության հետևանքով՝ հիմնագուրկ պնդումներ հեղինակած գիտնականները հայ հոգևոր մշակույթի տարբեր ճյուղերի ծագումն ու զարգացումը համարել են «խայտաբղետ փոխառությունների»⁴ արգասիք: Շատ են նաև դեպքերը, երբ հայ հոգևոր մշակույթի որոշ շրջափուլեր ամբողջովին համարվել են օտարի մշակույթի ենթաճյուղ կամ կցորդ, մինչդեռ երբեմն «հայը ինքն է եղեր անունը համար ուսուցիչը և բռնի քարշ տվեր իր ետևեն»⁵:

Հայ հոգևոր մշակույթում օտար մշակութային ազդեցությունները քննել են տարբեր հետազոտողներ. Կոմիտասը՝ երաժշտության մեջ, Հ. Աճառյանը՝ հայոց լեզվում, Վ. Հացունին՝ տարազանություն, Թ. Թորամանյանը՝ ճարտարապետության մեջ, Ա. Մնացականյանը՝ զարդարվեստում և այլք: Սակայն ոմանց աշխատություններում այս հարցը երբեմն կրել է հարակից, օժանդակ, լրացնող բնույթ: Նրանցից շատերն անգամ իրենց վերլուծություններով միտում են ունեցել քննելու հայ

⁴ Ա. Մվիրինի համոզմամբ՝ հայկական մանրանկարչությունը ծնվել ու զարգացել է հիմնականում խայտաբղետ փոխառությունների հողի վրա: Տես՝ Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955, էջ 10:

⁵ Այսպես է գրել Թ. Թորամանյանը 10-րդ դ. հայկական ճարտարապետության ծաղկումն արաբական քաղաքակրթությանը վերագրելու առթիվ: Տես՝ Թ. Թորամանյան, Զվարթնոց, Գագկաշեն, Եր., «Սովետական գրող» հրատ., 1984, էջ 60:

մշակույթի ինքնուրույնությանը վերաբերող խնդիրներ՝ անպայմանորեն հաշվի առնելով նաև օտար ազդեցությունները: Չնայած պատվախնդիր և արժանավոր այս գիտնականների աշխատություններին, վերոնշյալ եղծագրողների պատճառով, այսօր էլ հայ հոգևոր մշակույթի շատուշատ հարցերին վերաբերող սխալները կարոտ են սրբագրության:

Ինչու՞ և ինչպե՞ս է, որ տարբեր մշակույթների ուսումնասիրման արդյունքում հանգում ենք շատ ընդհանրական պատասխանների:

Պատմության ընթացքում տարբեր ազգեր ու ժողովուրդներ ունեցել են դրացիական հարաբերություններ կամ նվաճվել են այլ ազգերի ու ժողովուրդների կողմից: Պատմական այս անժխտելի փաստի արդյունքում նրանցից շատերը հաճախ դարձել են միևնույն մշակույթի կրողներ՝ ձեռք բերելով համանման կենսապայմաններ: Սրա արդյունքում ծնվել են մտածողության համանման ձևեր: Դրանք էլ անխուսափելիորեն ներթափանցել են սեփական հոգևոր մշակույթի առանցքային ճյուղեր: Զարգացվածության առավել բարձր մակարդակ ունեցող նվաճողները կամ դրացի պետությունները դարձել են այս հարցում թելադրող, պարտադրող: Իսկ հակառակ պարագայում՝ փոխառել են նվաճվածների կամ դրացիների մշակութային ձեռքբերումները: Փոխառող կողմը կամ վերցրել և ընդունել է նույնությամբ կամ հարմարեցրել է իր կենսազգացողությանը: Շատ դեպքերում ընդունել և գործածել է առանց ըմբռնելու, քանի որ «չըմբռնված ձևը ամենաընդհանուրն է և հասարակական զարգացման որոշ աստիճանի վրա կարող է գործածվել ամենքի կողմից»⁶: Սակայն առանց ըմբռնելու կամ ըմբռնելով օտարից չարդարացված փոխառման յուրացումն երբեմն հանգեցնում է բացասական հետևանքների: Փոխառող կողմը, կրկնօրինակելով, վերարտադրելով կամ սեփականին պատվաստելով օտար մշակութային տարրերը, իրեն օտարացնում է սեփական համապատասխան տարրերից: Եվ երբ այդ գործընթացը ստանում է զանգվածային և շարունակական բնույթ, խաթարվում է ազգի հոգևոր մշակույթի ինքնությունը:

Ինչպե՞ս տարբերակել արդարացված և չարդարացված փոխառումները: Արդարացված կարելի է համարել այն երևույթի փոխառումը, որը մինչ այդ փոխառող կողմի մոտ բացակայում էր կամ եղածը չէր բավարարում իր գործառնության: Զարդարացված համարենք այն փոխառումը, որը չի լրացնում բաց դաշտեր, չի ստանձնում նպատակային դեր կամ համահավասար է փոխառողի արդեն իսկ ունեցածին: Այո՛, արդեն իսկ ունեցածին համահավասար, համարժեք: Մեր իրականության մեջ

⁶ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը արվեստի մասին, Երևան-Մոսկվա, 1934, էջ 65:

հաճախ կարելի է հանդիպել մայրենիի աղավաղումների, օտարամուտ բառերի: Ամեն քայլափոխի լսելի է անգլերեն «OK» արտահայտությունն իբրև համաձայնության նշան: Համաձայնություն արտահայտող բառերի պակաս հայոց լեզուն չունի: «OK»-ը գործածելով՝ մենք օտարացնում ենք դրան համարժեք հայերեն բառերը՝ «լավ», «եղավ», «բարի»: Սրանք, ինչպես և «OK»-ը չեն գերազանցում երկու վանկը, հետևաբար գործածելով անգլերեն տարբերակը՝ ոչ մի կերպ չենք կրճատում արտասանվող արտահայտությունը: Այսինքն՝ «OK»-ի կիրառումը չի հանդիսանում արտասանության կրճատման պատրվակ, ինչպես օրինակ՝ ֆրանսերեն «merci»-ն: Չնայած վերջինը երեք վանկով կրճատում է հայերեն համարժեքի արտասանությունը, միևնույն է այն օտարացնում է մայրենիի «շնորհակալություն»-ը: Տարակույսից վեր է, որ սրանք չարդարացված փոխառումներ են, քանի որ իմաստային առումով այդ բառերի տեղերը հայերենում դատարկ չեն:

Հայերենի 10.996 արմատներից օտար լեզուներից փոխառվել են. միջերկրական լեզուներից՝ 5, փոքրասիականից՝ 9, խալդերենից՝ 15, ասուրերենից՝ 27, կովկասյանից՝ 60, իրանականից՝ 1411 (966 պիլ., 445 պրս.), հին լատիներենից՝ 11, ասորերենից՝ 211, հունարենից՝ 918, հունալատիներից՝ 151, եբրայերենից՝ 138, արաբերենից՝ 702, վրացերենից՝ 57, թուրք-թաթարականից՝ 170, հին ֆրանսերենից՝ 86, նոր եվրոպականից՝ 44 արմատ⁷:

Ակնհայտ է, որ հայերենը բազմաթիվ լեզուների նման մեծապես ազդվել է այլ լեզուներից: Ակնհայտ է նաև այն, որ մայրենի լեզուն ազգերի ու ժողովուրդների ամենատեղական տարբերակիչներից է: Սին չէ նաև այն պնդումը, թե մայրենիի անաղարտ պահպանումը, կիրառումը, զարգացումը հանդիսանում է ազգային ինքնության և հայապահպանության առաջնային երաշխիքը:

Հայն իր պատմական ուղին անհաշվելի անգամներ խաչմերուկել է արտագաղթի արահետներով: Հաճախ իր հայրենիքում եղել է նվաճյալ, հպատակ: Այս ամենին մշտապես զուգահեռվել է հույժ կարևոր հիմնախնդիր. թե՛ հայրենիքում, թե՛ գաղթօջախում պահպանել մայրենին և մայրենիի միջոցով՝ ազգային դիմագիծը: Այս հարցի շուրջ դարեր շարունակ, անհրաժեշտ չափով ասվել ու գրվել է, և մենք խնդիր չենք տեսնում ևս մեկ անգամ ապացուցել այս աներեր իրողությունը: Բայց

⁷ Տես՝ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., Պետական համալսարանի հրատ., 1940, էջ 602:

ավելորդ չենք համարում ևս մեկ անգամ փաստել սա՝ իբրև զարթուցիչ ազդաշեփոր:

Հայոց լեզվի հարատևմանը պիտի լծվեն բոլոր սերունդները:

Պարտավոր ենք.

1. Պետականորեն անկախ կարգավիճակում գերծ մնալ օտար բառերի, արտահայտությունների կիրառումից:

2. Կիսանկախ կամ գաղութացված կարգավիճակում հնարավորինս բացառել օտար լեզվի կիրառումը որպես պետական լեզու:

3. Գաղթօջախներում գերմարդկային ճիգեր գործադրել մայրենին սերունդների սեփականությունը դարձնելու համար:

Այստեղ տեղին է մեջբերել գաղթական հրեայի և հայի տարբերության մասին իմաստասեր Հայկ Ասատրյանի տողերը. «Նա մոռանում է լեզուն, ծպտում է իբր ոչ-հրեայ, բայց Թալմուտի մի բառով պահում է ցեղային ներքին կրակի մոլեգնությունը: Ծպտումի ընդունակ հային չի կարող փրկել ամբողջ «Նարեկ»-ը»⁸:

Քննվող խնդիրն ավելի հստակեցնելու համար դիտարկենք նաև հայկական տարազի կրած օտար ազդեցությունների մի քանի դրսևորումներ:

«Ի նչ կ'ընենք մեք Հայերս: Կ'երթանք՝ օտար ազգերու պատմական հանդերձից ձեւերը կը մուրանք, եւ կամ մեր գրաւոր կցկտուր նկարագրերէն թերի ձեւեր կը ստեղծենք, եւ կ'ընծայենք ազգին իբրեւ մեր հարց հարազատ պատկերները»:

Մեկ դար է, ինչ հայկական տարազը դուրս է եկել կիրառությունից, դարձել է լոկ ազգագրական ուսումնասիրությունների նյութ, կրում է միայն ծիսական կամ բեմական բնույթ: Եվ որքան էլ՝ տարազը նյութական է, միևնույն է այն հոգևոր մշակույթի առարկայացումն ու մարմնացումն է: Օտար ազդեցությունները հայ հոգևոր մշակույթում քննելիս՝ չպետք է շրջանցել տարազը, քանի որ այն «ցեղերու քաղաքակրթութեան գլխաւոր արտայայտութեանց մին է»: Հացունին արդարացիորեն գտնում էր, որ ազգերն իրենց հանդերձը ձևելու մեջ մեծապես օգտվել են միմյանցից: «Զօրաւոր ցեղ մը, որ կամ իւր մտաւոր բարձրագոյն բարգաւաճմամբ եւ կամ զինուորական ուժով իւր ազդեցութեան ենթարկեր է ուրիշ ցեղ մը, ամեն բանէ յառջ հրապուրեր է անոր աչքն իւր արտաքին ձեւովը, հագուստով. եւ տկարը փութացեր է նմանիլ անոր յոժարութեամբ. մերթ նաեւ ողորդելու կամ շնթելու համար իրեն իշխեցողին»: Նրա պնդմամբ՝ «զգեստին յեղաշրջութիւնք արտաքին ազդեցութեանց արդիւնք էին, ադունց ամենէն

⁸ Հ. Ասատրյան, Հատընտիր, Եր., «Ամարաս» հրատ., 2004 թ., էջ 101:

աւելի պիտի ենթարկուէր հայ ազնուական դասը՝ որ քաղաքականօրէն սերտագոյն յարաբերութեան մէջ կը գտնուէր օտարաց հետ»⁹: Որպէս այս մտքի ապացոյց՝ հիշենք երկու օրինակ. Հաղպատի եկեղեցու արևելյան ճակատի Գուրգեն ու Սմբատ Բագրատունիների բարձրաքանդակը և Անիի Գագիկաշեն եկեղեցու Գագիկ Ա-ի ծավալային քանդակը: Երկու դեպքերում էլ նրանք գլխին կրում են արաբական զանգվածեղ ապարոշ: Որոշ ուսումնասիրողներ այս և այլ դրսևորումներից ենթադրել են, թե Բագրատունիները կրել են արաբական տարագ:

Հայկական տարազի կրած թե՛ պարտադիր, և թե՛ ոչ պարտադիր ազդեցությունների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ իբրև մշակութային ճյուղ՝ հայկական տարազը միջին դարերում ամենաշատն է կրել օտար ազդեցություններ: Այն երբեմն մասնակի, երբեմն էլ ամբողջովին կորցրել է ազգային դիմագիծը: Բայց սրան զուգավար չպիտի շրջանցել մի հանգամանք. տարբեր պատճառներով հասարակ ժողովուրդը միշտ չէ, որ յուրացրել է օտար տարրերը: Նույնիսկ դրանց պատվաստման դեպքում ստեղծագործաբար է մոտեցել:

Նմանատիպ երևույթներ տեղի են ունեցել նաև հայկական երաժշտության հետ: «Հայոց մէջ հին ժամանակներէ ի վեր սովորութիւն է եկեղեցական երգեր երգել ընտանեկան հանդէսներու միջոցին. Թուրքիոյ մէջ, տիրացուները, այսինքն եկեղեցւոյ երգիչները, որ կ'երթային երգել մեծատուններու խնջոյքներուն, հայ երգերը սկսան զարդարել թրքակերպ գունաւորումներով, հաճելի ըլլալու համար այդ մեծատուններուն, որովհետեւ հայ եկեղեցական երգը, իր ազնիւ եւ մաքուր նկարագրով կոչնականները զուարթացնելու բնոյթ չունի, եւ այդ մեծատունները, Հայաստանէն հեռու, Կ. Պոլիս կամ ուրիշ մեծ քաղաքներու մէջ, քիչ մը Թրքաց ճաշակն ու բարբերը ընդգրկած էին: Ահա ինչպէս հայ եկեղեցական երաժշտութիւնը տակաւ առ տակաւ, մեծ քաղաքներու մէջ, իր մաքրութիւնէն ու ազգային նկարագրէն բան մը կորսընցուց եւ թրքական մեղկութիւնն ստացաւ: Մեծատուններու հացկերութիւններէն, այդ չարափոխումը փոխադրուեցաւ եկեղեցիներուն մէջ: Այդ մեծատունները, որ այն ժամանակաշրջանին մեր եկեղեցւոյ վարչութեան գլուխը կ'գտնուէին, պարտադրեցին երգիչներուն եկեղեցւոյ մէջ երգել իրենց նախընտրած թրքական ոճով: Առաջին զոհը այդ խաթարման, եղաւ «Տեր ողորմեան»¹⁰:

⁹ Վ. Հացունի, Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ-Ս. Ղազար, 1923, էջ 11:

¹⁰ Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ եւ յոդուածներ, գիրք Բ, Եր., «Սարգիս Խաչենց» հրատ., 2007, էջ 188:

Այս ողբածոր եղելությունը մի դրվագ է թրքահպատակ Հայաստանի մշակութային կյանքից: Ազգային երաժշտության նմանատիպ օտարումներ եղել են միջին դարերում, դրանից էլ վաղ ու կան նաև այսօր: Սա է պատճառը, որ անցյալում որոշ հայ և օտարազգի մասնագետներ կարծում էին, թե հայ երաժշտությունն աստրաբյուզանդական, հնդկապարսկական, արաբաթրքական, աղվանավրացական կամ այլ խառնուրդ է: Հասկանալի է, որ երաժշտական փոխազդեցություններն այնքան անխուսափելի էին, որքան հոգևոր մշակույթի մյուս ճյուղերի փոխազդեցությունները: Բայց այս հանգամանքը ելակետ ընդունողը, ով կբացառի հայ երաժշտության ինքնուրույնության աներեր փաստը, պիտի առճակատվի մի պարզ ճշմարտության. «Բայց, աշխարհի վրայ ո՞ր երաժշտութիւնն անխառն ու անապական է, մեր գիտցածով, միայն անասուններունը, որոնք նոյն ձայնն ու նոյն ելևէջը կ'երգեն, զի փոխառութեան շնորհք չունին. բայց մենք, Հայե՛րս, իրաւունք չունինք մէկ ու կէս կարծիքով կամ պատմութիւնով, լսուածն ստրկաբար արձանագրել, գրիչ շարժել եւ դատել մի պատմական ազգ, որ դեր է կատարել անցեալում, կատարում է ներկայում եւ դեռ պիտի կատարէ ապագայում, քանի շունչ կայ բերանում»¹¹:

Ըստ Կոմիտասի նույնը կատարվել է ժողովրդական երգերի հետ, պարզապես այլ մասշտաբներով. «Հայ ժողովրդական երաժշտութեան վրայ՝ օտար երաժշտութիւնները շատ քիչ ազդեցութիւն ունեցած են. որովհետեւ ժողովուրդը թրքական եղանակ մը թուրքերեն խօսքերով կ'երգէ, պարսկական եղանակ մը՝ պարսկերէն խօսքերով, քրդական եղանակ մը՝ քրդերէն խօսքերով, եւ այլն, ու երբեք օտար եղանակ մը՝ հայերէն խօսքերով. հայ լեզուով երգերը կ'երգէ զուտ ազգային եղանակներու վրայ: Միայն թէ աշուղները, որ շատ յաճախ քաղաքներուն մէջ կ'երգեն՝ մեծատուններուն մօտ, կը գործածեն օտար եղանակներ՝ յարմարեցուած հայերէն խօսքերու, զոր կը շարադրեն օտար – սովորաբար արաբ, պարսիկ կամ թուրք – տաղաչափական կանոններու համեմատ»¹²: «Կը գործածեն օտար եղանակներ՝ յարմարեցուած հայերէն խօսքերու». այս տողը հավաստյալ նաև մերօրյա հայ երգարվեստի նկարագրությունն է:

Օտար եղանակներ, հայերեն բառեր... Սա ազգային երաժշտության օտարում է:

Քննված նյութից պարզ է դառնում, որ հայկական թե՛ ժողովրդական, թե՛ եկեղեցական երաժշտությունը, տարբեր հանգամանքներով պայմանավորված, դարերի ընթացքում անընդհատ կրել է

¹¹ Նույն տեղում, էջ 86:

¹² Նույն տեղում՝ էջ 193:

ներգործություններ և մեզ է հասել աղավաղված վիճակում: Կոմիտասի և այլ պատվելի գիտնականների շնորհիվ՝ նախորդ դարում հայ երաժշտությունը գտվել, շերտագատվել ու բերվել է կուսական վիճակի: Այսքանից հետո ի՞նչ է կատարվում այսօրվա հայ երաժշտության հետ: Կատարվում է այն, ինչ կատարվել է դարեր շարունակ:

Ինչքանով պահպանեցինք պատվելիների գտածը: Պահպանեցինք միայն բեմերի վրա և ոչ առօրյայում: Անաղարտը չմտցրինք առօրյա: Արդյունքում տեղի ունեցավ հակառակը. օտարամուտը, ցածրաճաշակը, ապագայինը բարձրացավ բեմ՝ ձևավորելով օրվա հայ երաժշտությունն ու վերջինին կրկին գրկեց ազգային դիմագծից:

Համապատասխանեցնելով ներկա ուսումնասիրության ձևաչափին՝ դիտարկեցինք հայ հոգևոր մշակույթի ընդամենը մի քանի ըմբռնելի, ակնբախ դրսևորումներ: Վերջիններն ապացուցում են վերոնշյալ միտքը, որ օտար ազդեցությունները, օտարամուտ տարրերը հաճախ խաթարել են հայ հոգևոր մշակույթի բնականոն զարգացումը և երբեմն ունեցել են ազգայինը դիմագրկող հետևանքներ:

Այսպիսով, հիմնվելով նմանատիպ մատչելի վերլուծությունների վրա՝ սահմանենք. «հոգևոր մշակույթի օտարումներ» են այն չարդարացված փոխառումները, որոնք հանգեցնում են սեփական համապատասխան տարրերի գործածությունից դուրս մղման:

Իսկ որո՞նք պիտի լինեն օտարամուտ տարրերի ներհոսքը սահմանափակելու, չափավոր ու անվտանգ դարձնելու, զսպելու կամ, հարկ եղած դեպքում, կանխարգելելու մեխանիզմները:

Հասկանալի է, որ հետևանքների վերացմամբ խնդրին լուծում չի տրվի, ուստի պիտի քննենք պատճառները: Վերջիններից նշենք հիմնականն ու կործանարարը՝ օտարամոլությունը, և այն դիտարկենք հայի էթնիկական ինքնության համատեքստում:

Օտարամոլությունը, սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր, տարբեր չափերով դրսևորվել է հայ էթնոսի դիմագծում և վտանգել նրա էթնիկական ինքնությունը:

«Հայ ազգի օտարամոլության դրդապատճառներն են՝ պետականության կորուստը, զանգվածային արտագաղթը, հայերի սփռված լինելը, միասնական մշակված, լիարժեք ազգային հայեցակարգի բացակայությունը և գլոբալացումը:

Հայ էթնոսը, տևական ժամանակ ապրելով օտարների տիրապետության ներքո, չի ունեցել ինքնուրույն պետականություն և

քաղաքական համակարգ, գոյատևման փիլիսոփայությամբ ձեռք է բերել թերաբժեքության բարդությ, առավել ևս՝ օտարամոլություն»¹³:

Այս տողերը բնորոշ են հիմնականում հայրենիքում ապրող հայերին: Իսկ, ահա, գաղութահայության համար, ազգային ինքնության համատեքստում, օտար ազդեցությունները այլ մասշտաբների սպառնալիք են: Քրիստոնեական երկրների գաղութահայությունը ազգապահպանման հարցում ավելի ապահով է զգում և գործնականում չի կառչում իր հոգևոր մշակույթից: Խոսելով օտար լեզվով, ձեռք բերելով օտար լեզվամտածողություն, հեռանալով սեփական հոգևոր մշակույթից՝ գաղութահայը պարտվում է ասիմիլյատիվ մարտահրավերներում և կորցնում է «կատարյալ» կամ գոնե «գործնականում լրիվ» էթնոկիր լինելու հնարավորությունները: Նա զրկվում է էթնիկականության բաղադրիչներից և վատագույն դեպքում դառնում՝ «գրոյական» էթնոկիր¹⁴:

Նույնը կատարվում է նաև ոչ քրիստոնեական երկրների գաղութահայության հետ, պարզապես ավելի դանդաղ տեմպերով՝ հաշվի առնելով կրոնական փոքրամասնություն լինելու և դրանով որոշակիորեն մեկուսացած մնալու փաստը:

Ինչևէ, եթե գաղութահայի պարագայում հոգևոր մշակույթի միջոցով ասիմիլյատիվ մարտահրավերների հաղթահարումը դառնում է գրեթե անհնարին, ապա հայրենիքում ապրողի համար՝ ցայսօր ձևավորված գաղափարախոսություններից՝ ազգայնականությունը, այստեղ ունի փրկարար դերակատարում:

«Ազգայնականություն» հասկացությունը, ցավոք, ուղղակիորեն, երբեմն էլ անուղղակի կերպով հրամցվել է որպես բացասական երևույթ՝ նույնացվելով այլատյացության հետ: Այս նույնացումը համաշխարհային քաղաքականության ուղղորդման հետևանք է:

«Ազգայնականության թերագնահատումը կամ անտեսումը հանգեցնում է կոսմոպոլիտիզմի, գերագնահատման էլ՝ ազգային սնապարծության, ազգայնամոլության»¹⁵:

¹³ Վ. Հախվերդյան, Օտարամոլությունը հայի էթնիկական ինքնության համատեքստում, ԳՊՄԻ Գիտական տեղեկագիր, հ. 2, Գյումրի, 2014, էջ 162:

¹⁴ Ալբերտ Նալչաջյանն առանձնացնում է էթնիկականության հետևյալ աստիճանները՝ կատարյալ էթնոկիր, գործնականում լրիվ էթնոկիր, մասնակի (ոչ լրիվ) էթնոկիր, ձևական էթնոկիր, գրոյական էթնոկիր: Տես՝ Ա. Նալչաջյան, Ազգային ինքնություն, Եր., 2016, էջ 12:

¹⁵ Վ. Հախվերդյան, Օտարամոլությունը հայի էթնիկական ինքնության համատեքստում, ԳՊՄԻ Գիտական տեղեկագիր, հ. 2, Գյումրի, 2014, էջ 168:

Մեր առաջարկած տեսության համաձայն՝ հայ հոգևոր մշակույթի օտարամուտ տարրերը պիտի մշակվեն ու անցնեն ազգայնական խողովակներով: Այս գործընթացը չի ենթադրում մերժում համաշխարհային մշակութային նվաճումներին, չի ենթադրում մեկուսացում, չի ենթադրում սեփական հոգևոր մշակույթի լճացում:

Ազգայնականությունը հայ հոգևոր մշակույթում մերժում է միայն այն օտար ազդեցությունները, որոնք տանում են էթնիկական ինքնության աղավաղման և դառնում են սպառնալիք: Ազգայնականությունն առաջարկում է անխուսափելի օտարամուտ տարրերն ազգայնացնել, իսկ հոգևոր մշակույթի կերտման ճանապարհը հնարավորինս զերծ պահել օտար ազդեցություններից: «Վա՛յ այն ծառին, վա՛յ այն բուսականին, որի արմատն անընդունակ է յուր հատակից ընդունելու և պատրաստելու յուր հյութը...» (Մ. Նալբանդյան)¹⁶:

«Ժողովուրդն ընդունում է օտար մշակույթն ապազգայնանալով, ցեղը՝ ազգայնացնում է իր ընդունածը» (Գ. Նժդեհ): Ուրեմն այստեղ նույնպես պիտի որդեգրել «ցեղային» բարոյականը, չհեռանալ սեփականից, նորը ստեղծելիս առաջնորդվել ազգայինով:

Ազգայնականությունը հոգևոր մշակույթում մեզ թույլ կտա ծավալել էթնոպաշտպանական շարժում: Պիտի վերաբժնորվի «ազգայնականություն» հասկացությունը: Դրա ներդրումը հայ հոգևոր մշակույթում ո՛չ միայն կապահովի հանրային կատարյալ էթնոկիրություն, ոչ միայն կդառնա հզոր պատվար ազգային ինքնության սպառնալիքների դեմ, այլև՝ կյուծի պատմական, քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ հիմնախնդիրներ:

Դ. Պետրոսյան

ՕՏԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՄ.

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ամփոփում

Աշխարհաքաղաքական գործընթացներով պայմանավորված՝ տարբեր ազգեր ու ժողովուրդներ հայտնվում են միևնույն քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային «տանիքի» տակ: Փոքր ազգերի պարագայում, բացի դրական ազդեցությունից, այս գործընթացը բերում է նաև ասիմիլյատիվ մարտահրավերներ: Դրանք հնարավոր է հաղթահարել ազգային հոգևոր մշակույթի անաղարտ պահպանման միջոցով: Դրա միակ

¹⁶ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, Եր., ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1979, էջ 56:

Երաշխիքը սեփական հոգևոր մշակույթի ճանաչողությունն է և օտար ազդեցությունների հանդեպ զգուշավորությունը:

Д. Петросян

**ВНЕШНИЕ ВЛИЯНИЯ В АРМЯНСКОЙ ДУХОВНОЙ КУЛЬТУРЕ:
ВОПРОСЫ НАЦИОНАЛЬНОГО СВОЕОБРАЗИЯ**

Резюме

Обусловленные геополитическими процессами разные нации оказываются под одной и той же политической, экономической, военной и культурной “крышей”. В случае малых народов, кроме положительного воздействия, этот процесс приводит и к ассимилятивным призывам к борьбе. Они могут быть преодолены за счет сохранения чистой духовной культуры нации. Единственной гарантией этого является познание собственной духовной культуры и осторожность по отношению к внешним влияниям.

D. Petrosyan

**FOREIGN INFLUENCES IN ARMENIAN SPIRITUAL CULTURE:
ISSUES OF NATIONAL INDENTITY**

Summary

Due to geopolitical processes different nations are gathered under the same political, economic, military and cultural "roof". In case of small nations, apart from the positive impact, this process also leads to assimilative challenges. They can be overcome by preserving the pure spiritual culture of the nation. The only guarantee for this is recognition of one's own spiritual culture and being cautious with foreign influences.